



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

Նախագահող դատավոր դատական նիստերի քարտուղարներ դատախազ ՀՀ ՊՆ 54122 գորամասի հրամանատար դատապարտյալ պաշտպան	Վ.Ռշտունի Ռ.Դավոյան, Մ.Մելքոնյան Հ.Ալեքսանյան Կ.Միրզոյան Հ.Հովհաննիսյան Ն.Նորիկյան
---	---

<<10>> մայիսի 2017թ.

ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև դատարան) 2017 թվականի հունվարի 23-ի որոշման դեմ դատապարտյալ Հովհաննես Արշակի Հովհաննիսյանի պաշտպան Նորիկ Նորիկյանի վերաքննիչ բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի դատավճռի համաձայն՝ Հովհաննես Արշակի Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում պահելը՝ 4 ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով. փորձաշրջանի սկիզբ է հաշվարկվել գորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու օրը՝ 2016 թվականի հունվարի 12-ը:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 23-ի որոշմամբ ՀՀ ՊՆ 54122 գորամասի հրամանատար

Կ.Միրզոյանի միջնորդությունը՝ դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին, բավարարվել է և դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի դատավճռով նշանակված 4 ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելը թողնվել է կրելու:

2017 թվականի փետրվարի 2-ին Վերաքննիչ դատարան է ստացվել դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի պաշտպան Ն.Նորիկյանի վերաքննիչ բողոքը, իսկ վերաքննիչ բողոքի վերաբերյալ նյութերը ստացվել են 2017 թվականի փետրվարի 20-ին:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի պաշտպան Նորիկ Նորիկյանը վերաքննիչ բողոքում նշել է, որ դատարանը թույլ է տվել դատական սխալ, դատարանի որշումն անհիմն է և կառուցված է ձևական հետևությունների վրա:

<<Խիստ նկատողություն>> կարգապահական տույժը դատարանի կողմից չէր կարող հաշվի առնվել, քանի որ միջնորդությունը դատարան ներկայացնելու պահին կարգապահական տույժը կրելու ժամկետը համարվել է լրացած, հետևաբար այդ մասով Հովհաննես Հովհաննիսյանը համարվել է կարգապահական տույժ չունեցող:

Մեջբերելով <<ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, 28-րդ հոդվածի 4-րդ մասը եկել է այն հետևության, որ դատարանը պետք է պարզեր Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հանգամանքները, մինչ այդ ծառայողական քննություն իրականացնելու և այդ ընթացքում Հովհաննես Հովհաննիսյանի կողմից իր իրավունքների իրացման համար անհրաժեշտ հնարավորություն տրամադրելու հանգամանքը կամ դրա բացակայությունը: Դատարանը չի պարզել նաև կարգապահական տույժերի շարժառիթները, դրդապատճառները և բավարարվել է ընդամենը դրանց արձանագրմամբ, այն դեպքում, երբ պետք է հաշի առներ Հովհաննես Հովհաննիսյանի անձը, կատարած իրավախախտումների բնույթը, ծանրության աստիճանը, պարզեր, թե դատավճռով ինչպիսի պարտականություններ են դրվել վերջինի վրա, որոնք է նա կատարել, և ինչպիսի պայմաններում է խուսափել դրանք կատարելուց, պարզեր դրանց ձևավորման նախադրյալները, հիմքերը, միաժամանակ հաշվի առներ, թե նշված ժամանակահատվածում նշված գորամասի հրամանատարությունը բացի կարգապահական տույժեր նշանակելուց ինչպիսի գործողություններ է կատարել, այդ թվում և խրախուսական՝ Հովհաննես Հովհաննիսյանի վարքագիծը հսկողության տակ պահելու համար:

Նշված հանգամանքների վերլուծությունն ու հետազոտումը դատարանի համար պետք է կրեր պարտադիր բնույթ, քանի որ միայն նշված հանգամանքների պատշաճ ուսումնասիրության և վերլուծության հիման վրա դատարանը կարող էր կայացնել հիմնավորված դատական ակտ, հակառակ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասով դատարանին պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցի լուծման հայեցողությամբ օժտելը կդառնա ինքնանպատակ և կամայական:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցի լուծման ընթացքում դատարանը պարտավոր էր պարզել, թե գորամասի հրամանատարությունը ինչ ծառայությունների կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ է վերահսկողություն իրականացնել Հովհաննես Հովհաննիսյանի

կողմից հասարակական կարգը պահպանելու և դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելու նկատմամբ, ինչպիսին է եղել այդ վերահսկողությունը, ինչ արդյունք է արձանագրել, որպիսի հանգամանքը դատարանի կողմից պատշաճ ուշադրության չի արժանացել:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 23-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և որոշում կայացնել միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Միաժամանակ բողոքաբերը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է Հովհաննես Հովհաննիսյանի դիմումները:

Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերը և կողմերի պարզաբանումները.

Պաշտպան Նորիկ Նորիկյանը վերոնշյալ հիմնավորումներով ներկայացրեց վերաքննիչ բողոքը՝ խնդրելով այն բավարարել:

2017 թվականի ապրիլի 28-ին և մայիսի 3-ին Վերաքննիչ դատարան է ստացվել ՀՀ ՊՆ 54122 գործառնախ հրամանատարի դիմումները, որոնցով վերջինը հայտնել է, որ մարտական պատրաստվածության պլանով նախատեսված միջոցառումներին մասնակցելու անհրաժեշտությունից ելնելով չի կարող ներկայանալ դատական նիստին և խնդրել է դատական նիստն անցկացնել իր բացակայությամբ: Միաժամանակ հայտնել է, որ առարկում է վերաքննիչ բողոքի դեմ, քանի որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 23-ի որոշումը հիմնավորված և օրինական է:

Դատական նիստի ընթացքում պաշտպանը ներկայացրեց ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի մարտի 20-ի գրությունը:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով ներկայացված բողոքը և ներկայացված նյութերը, գտնում է, որ դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի պաշտպան Նորիկ Նորիկյանի վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզուգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատիժ նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզուգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ վերահսկողությունն

իրականացնում է պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը, իսկ գինձառայողի նկատմամբ՝ նրա գործամասի հրամանատարությունը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը խուսափում է դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ թույլ է տալիս իրավախախտում, որի համար նրա նկատմամբ վարչական, իսկ գինձառայողի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառվում, ապա նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը գրավոր նախազգուշացնում է նրան՝ պատժի պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորության մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ պարտականությունները պարբերաբար չկատարել է համարվում անձի կողմից մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ արգելված գործողությունների կատարումը կամ պարտականությունների չկատարումը կամ իր վրա դատարանի դրած պարտականությունները երեսուն օրից ավելի չկատարելը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ փորձաշրջանը հաշվարկվում է դատապարտյալին պրոբացիայի ծառայության տարածքային մարմնում, իսկ գինձառայողին՝ նրա գործամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու պահից: Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվում է փորձաշրջանի ավարտից հետո, և նա հանվում է հաշվառումից:

Տվյալ դեպքում Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով, իսկ փորձաշրջանի սկիզբն է հաշվարկվել գործամասի հրամանատարության կողմից դատապարտյալին հաշվառման վերցնելու պահը: Հովհաննես Հովհաննիսյանը ՀՀ ՊՆ 60369 գործամասի հրամանատարության կողմից հաշվառման է վերցվել 2016 թվականի հունվարի 12-ին:

Չորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու օրվանից Հովհաննես Հովհաննիսյանը երեք անգամ ենթարկվել է կարգապահական տույժի. 2016 թվականի օգոստոսի 24-ին՝ խիստ նկատողության, 2016 թվականի սեպտեմբերի 13-ին՝ 30 օր ժամկետով կարգապահական վաշտ ուղարկելու և 2016 թվականի դեկտեմբերի 24-ին՝ 30 օր ժամկետով կարգապահական վաշտ ուղարկելու: Նշված երեք դեպքերում ՀՀ ՊՆ թիվ 54122 գործամասի հրամանատարի կողմից Հովհաննես Հովհաննիսյանը նախազգուշացվել է, որ իր վրա դրված պարտականություններից հետագայում ևս խուսափելու կամ նոր իրավախախտում թույլ տալու դեպքում հնարավոր է դատարանի դատավճռով նրա նկատմամբ նշանակված պատիժն ի կատար ածվի:

2017 թվականի հունվարի 10-ին առաջին աստիճանի դատարան է ստացվել գործամասի հրամանատարի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին միջնորդությունը, որը 2017 թվականի հունվարի 23-ի որոշմամբ բավարարվել է:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ թեև դատապարտյալը կարգապահական տույժերի է ենթարկվել և գործամասի հրամանատարությունը միջնորդություն է

ներկայացրել դատարան փորձաշրջանի ընթացքում, սակայն առաջին ատյանի դատարանի կողմից որոշումը կայացնելու պահին արդեն ավարտված է եղել Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված փորձաշրջանի ժամկետը: Այսինքն՝ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացրել է այն ժամանակ, երբ Հովհաննես Հովհաննիսյանը փաստացի անցել է փորձաշրջանը և դրա ուժով փաստացի ազատվել է պատժից: Հակառակ մոտեցման դեպքում կստացվի, որ յուրաքանչյուր դեպքում, երբ փորձաշրջանի ավարտից հետո՝ (ինչի ուժով անձի դատվածությունը համարվում է մարված) այդ թվում տարիներ անց, պարզվի, որ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարել է խախտումներ, դատարանը կարող է վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը և դատապարտյալին ուղարկել այն պատիժը կրելու, որի համար սահմանված փորձաշրջանն անցնելու հիմքով վերջինը ազատվել է պատժից: Արդյունքում կստացվի, որ դատապարտյալը նույն արարքի համար կրկին պատժի է ենթարկվում:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ փորձաշրջանի ժամկետը կասեցնելու որևէ կարգավորում, սակայն, երբ միջնորդությունը փորձաշրջանի ընթացքում է դատարան ներկայացվում, իսկ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու որոշումը կայացնում է փորձաշրջանի ավարտից հետո, փաստացի ստացվում է, որ ներկայացված միջնորդությունը կասեցրել է փորձաշրջանի ընթացքը, որպիսի մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար անընդունելի է:

Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առաջին ատյանի դատարանը չէր կարող որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին, քանի որ դատական ակտը կայացնելու պահին լրացած է եղել Հովհաննես Հովհաննիսյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատապարտյալի կողմից փորձաշրջանի ընթացքում պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու դատարանի հայեցողական լիազորության հարցին:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի և 7-րդ մասի կարգավորումներից բխում է, որ դատապարտյալի կողմից փորձաշրջանի ընթացքում պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցի լուծումը թողնված է դատարանի հայեցողությանը:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրի կողմից նշված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելը որպես դատարանի հայեցողական լիազորություն նախատեսելն ինքնանպատակ չէ, այլ դրա իմաստը կայանում է նրանում, որ կոնկրետ դեպքում դատարանին հնարավորություն է տրվում բազմակողմանի ուսումնասիրության ենթակել դատապարտյալի վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու հանգամանքները, կատարած իրավախախտման բնույթը և առանց նշանակված պատիժը կրելու՝ դատապարտյալի ուղղվելու և պատշաճ վարքագիծ դրսևորելու հնարավորության մասին եզրահանգում կատարել: Հետևաբար՝ յուրաքանչյուր դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծելիս դատարանը ոչ թե պետք է սահմանափակվի կատարված խախտումներն ընդամենն արձանագրելով, այլ պետք է դատական ակտում պատճառաբանի դատապարտյալի վարքագծի նկատմամբ

վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու պատճառները՝ հիմնավորելով դատապարտյալի վրա դրված պարտականությունները չարամտորեն չկատարելը, այդ թվում կատարած իրավախախտման համար վարչական, իսկ զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժի ենթարկված լինելը որքանով է վկայում այն մասին, որ առանց նշանակված պատիժը ռեալ կրելու դատապարտյալի ուղղումը և պատժի մյուս նպատակների իրականացումը հնարավոր չէ ապահովել: Հակառակ մոտեցման դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հայեցողական լիազորության նախատեսումը կկորցնի իր իմաստը, իսկ դրա կիրառումը կարող է հանգեցնել կամայականության:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ եթե դատապարտյալի կողմից այնպիսի իրավախախտում է կատարվել, որի համար նրա նկատմամբ վարչական, իսկ զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառվել, ապա դատարանը պետք է քննարկի նաև, թե կատարված իրավախտումը որքանով է կապված այն արարքի հետ, որի համար նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ, 394-րդ և 412-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի պաշտպան Նորիկ Նորիկյանի վերաքննիչ բողոքը բավարարել:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի հունվարի 23-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ մերժելով ՀՀ ՊՆ 54122 գործամասի հրամանատար Կ.Միրզոյանի միջնորդությունը:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Վ.ՌՇՏՈՒՆԻ